ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հոկտեմբերի 15-ը և 16-ը, շաբաթ և կիրակի օրերը, հոգևոր ուրախության և մխիթարության օրեր եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Այդ օրերին քահանայական կոչում և ձեռնադրություն ստացան հոգևոր ճեմարանի երեք շնորհալի շրջանավարտներ՝ Խաչիկ սրկ. Խարապյանը, Սմբատ սրկ. Արիստակեսյանը և Վարդան սրկ. Բաղդասարյանը՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանի:

ԿՈՉՈՒՄ ՆՈՐԸՆԾԱՆԵՐԻ

Շաբաթ օրը, երեկոյան, կիրակամտի ժամերգության ավարտին, կատարվում է երեք սարկավագների «Կոչումն քահանայութեան» արարողությունը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Հնչում է «Նայեաց ի մեզ» շարականը: Հանդիսավորությամբ դեպի Իշման Ս. Սեղան են առաջնորդվում ձեռնադրող եպիսկոպոս Տ. Ներսես Պոլատյանը և երեք սարկավագները:

Խարտավիլակ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը, ստանալով խոսելու իրավունք, ըստ Ձեռնադրության Մաշտոցի, բարձր ձայնով ասում է.

«Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես **զԽաչիկ, զՍմբատ և զՎարդան սարկաւագունսս,** զոր ընծայէ քեզ, յաստիճան քահանայութեան, որք կամօք և յօժարութեամբ իւրեանց եկեալ են յայս կարգ, և ոչ ի հարկէ հրաւիրողաց»:

Այնուհետև տեղի է ունենում երիտասարդ սարկավագների հոգևոր-իմացական պատրաստության հրապարակային քննությունը. «Պահեա՞լ է զանձն իւր սուրբ և անարատ... ունի՞ զուսումն քահանայութեան լրիւ և զգիտութիւն աստուածային օրինաց»: Երեք սարկավագները միաբերան հայտարարում են. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ Հայրապետսն...» և խոստանում են աշակերտել և հետևել Եկեղեցու ուղղափառ Հայրապետներին ու աստվածաբան վարդապետներին:

Կոչման արարողության ավարտին սարկավագները հրապարակորեն արտասանում են Հայաստանյայց Եկեղեցու «Հաւատոյ խոստովանութիւնը»՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի, որը սահմանել է Ս. Գրիգոր Տաթևացին: Իսկ մի օր առաջ նրանք պաշտոնապես ստորագրել էին կուսակրոն քահանայության հետևյալ ուխտագիրը.

«Ներքո ստորագրյալս՝ Աստուծո ողորմությամբ, իմ ապատ կամքով և հաստատ համոզմամբ հանձն եմ առնում ընդունել կուսակրոն քահանայության **կարգը:**

Մի պահ ձեռնադրության արարողությունից

Փրկչի Իշման Սուրբ Սեղանի առաջ, **խոստանում եմ և ուխտ եմ անում՝**

ա.— Հավատով և նվիրումով ծառայել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և հայ ժողովրդին:

բ.— Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան մնալ մինչև իմ կյանքի վախճանը, սրբությամբ պահպանելով ժուժկալության, աղքատության և **անպայմանավոր հնազանդության** հայրապետահաստատ կանոնները:

գ.— Ապրել առաքինի կյանքով ու պարկեշտ վարքով, անձանձրույթ կատարել եկեղեցական պաշտամունքները և տևապես հետամուտ լինել իմ ինքնակարգացման՝ հոգևոր, գիտական և գրական իմաստով:

դ.— Համաձայն Հայոց Հայրապետի հրամանների, ինձ վստահված պաշտոնները և աշխատանքները կատարել սիրով, եռանդով ու բարեխղճությամբ:

Որպես երաշխավորություն իմ այս **խոստումների, ստորագրում եմ սույն ուխտագիրը»:**

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում սկսվում է ս. պատարագը: Նրվա պատարագիչն է Տ. Ներսես եպս. Պոլպապյանը:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» աղոթքը: Սարկավագները խարտավիլակ Տ. Գրիգորիս վրդ. Բունիայանի առաջնորդությամբ Սեղանի ձախակողմյան աստիճաններով ծնրադիր բարձրանում են Ավագ Սեղանի բեմ և, դառնալով դեպի ժողովուրդը, ձեռամբարձ հրաժարվում աշխարհից՝ կոչվելու համար «... ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, սրբոյ Եկեղեցւոյ ի սպասաւորութիւն՝ ըստ վկայութեան անձանց իւրեանց և ամենայն ժողովրդեան»:

Մայր տաճարի խնկաբույր կամարների տակ հանդիսավորությամբ հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականը: Բոլորի ուշադրությունը սևեռվել է սարկավագների վրա, որոնք կամովին և գիտակից նվիրումով պատրաստ են իրենց ողջ կյանքը կապելու Մայր Աթոռին և անձնվեր ծառայելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն և հայ ժողովրդին: Ահա թե ինչու ժողովրդի խուռներամ բազմությունն էլ, հոգեպես միաձուլվելով արարողությանը, համոզումով և գոհունակությամբ վկայում է. «Արժանի են»:

Ապա նրանք ծնրադիր մոտենում են և բոլորվում ձեռնադրիչ սրբազան հոր աթոռի շուրջ: Սրբազանն իր ձեռքերը դնում է նրանց գլխին՝ արտասանելով. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը:

Օրհնությամբ և աղոթքով նորընծաներին շնորհվում են քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար, շուրջառ: Հնչում է զգեստավորման «Խորհուրդ խորին» շարականը: Մի պահ փակվում է խորանի վարագույրը և քիչ հետո նորից բացվում: Բոլորի հայացքները դարձյալ սևեռվում են խորանի աջակողմյան մասում կանգնած ձեռնադրյալներին, որոնք իրենց ճոխ և վառվռուն զգեստների մեջ թաքցրած մարդկային տկարություններով ծանրաբեռն իրենց մարմինները՝ ձեռնամած աղոթում են: Այդ զգեստները խորհրդանշում են մարդկային առաքինությունները: Մեր մատենագիրներից Հովհաննես վրդ. Արճիշեցին իր պատարագի մեկնության մեջ գրում է, որ քահանան ինչպես մարմինն է զարդարում այդքան գեղեցիկ զգեստներով, այդպես էլ պետք է հոգին զարդարի երկնային շնորհներով ու առաքինությամբ:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը:

Ձեռնադրության հանդիսավոր արարողությունը հասնում է իր հոգևոր վերացման սրբազան բարձունքին: Օծման խորհրդավոր պահն է: Ձեռնադրող սրբազանը ս. մեռոնով օծում է քահանայական լրիվ զգեստավորման մեջ կանգնած երեք նորընծաների ճակատն ու ձեռքերը և նրանց վերանվանում հոգևոր նոր անուններով: Խաչիկ սրկ. Խարապյանը վերանվանվում է Տ. Թորգոմ քահանա, Սըմբատ սրկ. Աղիստակեսյանը՝ Տ. Ասողիկ քահանա, իսկ Վարդան սրկ. Բաղդասարյանը՝ Տ. Շնորհք քահանա:

Այնուհետև նորընծաները դառնալով դեպի ժողովուրդը՝ տալիս են իրենց անդրանիկ քահանայական օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Տ. Ներսես եպս. Պոլպապյանը ձեռնադրության և օծման սույն արարողությունից հետո խոսում է ոգեշունչ մի քարոզ, շնորհավորում - նորընծա քահանաներին, հույս հայտնում, որ նրանք իրենց ապագա եկեղեցանվեր գործունեությամբ միշտ բարձր կպահեն հոգևորականի նվիրական կոչումը:

ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում են «Օրհնութիւն աբեղայի» և «Օրհնութիւն վեղարի» կարգերը:

Աստվածաշնչական համապատասխան ընթերցումներից, շարականներից ու աղոթքնե-

րից հետո Տ. Ներսես եպս. Պոլսայանը հանում է Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք քահանաների գլուխներից սարկավագական ջբրունը (գդակ) և այն փոխարինում կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով. «Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք: Աստուած զգեցուցէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ...»:

«Պահպանիչ»-ով ավարտվում է վեղարի տվչության սույն կարգը, որից հետո նորընծա Տ. Թորգոմ, Տ. Ասողիկ և Տ. Շնորհք աբեղաները Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի և ձեռնադրող եպիսկոպոս Տ. Ներսես Պոլսայանի առաջնորդությամբ Վեհարանում ներկայանում են Վեհափառ Հայրապետին:

Նորին Սրբությունը հուզումով և հայրական սիրով է ընդունում իր հոգևոր զավակներին և նրանց բաշխում իր սրբական օրհնությունն ու հայրական բարեմաղթությունները՝ հույս հայտնելով, որ նորընծա աբեղաները կլինեն Հայ Եկեղեցու արժանի սպասավորներ, «զի-շակք առանց ամօթոյ»:

Նորընծա աբեղաները իրենց կանոնական-ավանդական քառասունքը կանցկացնեն Մայր Աթոռի վանական խաղաղ մթնոլորտում՝ հոգևոր ղեկավարության ներքո Տ. Եղիշե քհն. Բաղրամյանի:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է երեք նորընծա աբեղաներին՝ ցանկանալով նրանց հաջողություններ իրենց ապագա հոգևոր ծառայության պատասխանատու ասպարեզում: